# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

   Արաքսիա Սվաջյան

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

2. **Գործուղման վայրը և ժամկետները**

3. Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Փարիզ, 2026 թվականի մարտի 23-ից 26-ը

4. **Հրավիրող կողմը**

Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNCESCO)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)**

Մասնակցել կրթության գլոբալ կոալիցիայի 6-րդ տարեկան հանդիպմանը և 2026 թ. Կրթության գլոբալ մշտադիտարկման (GEM) զեկույցի ներկայացմանը

6. **Քննարկված թեմաները**

Միջոցառման շրջանակում քննարկվել են կրթության ոլորտի մի շարք արդիական և ռազմավարական կարևորություն ունեցող թեմաներ, որոնք վերաբերում էին երեխաների կրթության մեջ ընդգրկվածության, գենդերային հիմնախնդիրներին, ներառական կրթությանը, բոլոր երեխաների համար կրթության հավասար հնարավորությունների ապահովմանը, կրթության որակի հետ կապված հիմնահարցերին: Մարտի 25-ին ներկայացվեց Կրթության գլոբալ մշտադիտարկման 2026թ-ի զեկույցը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Մարտի 25-ին ներկայացվեց Կրթության գլոբալ մշտադիտարկման 2026թ-ի զեկույցի ներկայացման շրջանակում մասնակցել եմ «Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ» պանելային քննարկմանը, որի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը՝ ուղղված

յուրաքանչյուր երեխայի կրթության հիմնարար իրավունքի ապահովմանը: Ընդգծել եմ, որ կրթության հասանելիությունը, մատչելիությունն ու որակը գտնվում են պետության առաջնահերթությունների շարքում: Մասնավորապես անդրադարձ եմ կատարվել 2023 թվականի աշնանը Լեռնային Ղարաբաղից տեղահանված շուրջ 21.000 երեխաների կրթության կազմակերպման գործընթացին: Նշել եմ, որ այդ երեխաների համար իրականացվել են արագ և համակարգված միջոցառումներ՝ ապահովելով նրանց անհապաղ ընդունելությունը դպրոցներ՝ անկախ փաստաթղթերի առկայությունից կամ կրթական ծրագրերի տարբերություններից: Միաժամանակ դպրոցներում ներդրվել են հոգեբանական և հոգեսոցիալական աջակցության ծրագրեր՝ նպաստելով երեխաների լիարժեք ներառմանը և ուսումնական գործընթացին ակտիվ մասնակցությանը:

Ելույթում կարևոր տեղ է հատկացվել նաև ներառական կրթության քաղաքականությանը: Նշվել եմ, որ 2014 թվականից Հայաստանի հանրակրթության համակարգն անցում է կատարել համընդհանուր ներառական կրթության, որի արդյունքում զգալիորեն ընդլայնվել են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության հնարավորությունները: Իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր, վերանայվել են ուսումնական ծրագրերը, իսկ դպրոցները համապատասխանեցվել են մատչելիության չափանիշներին: Ներկայումս հազարավոր երեխաներ ընդգրկված են հանրակրթական դպրոցներում, իսկ հատուկ դպրոցները աստիճանաբար վերափոխվում են ռեսուրս կենտրոնների՝ նպաստելով ներառական համակարգի զարգացմանը:

**Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Տեղի են ունեցել քննարկումներ տարբեր երկրների պատվիրակությունների հետ, ներկայացնելով մեր կրթական համակարգի ձեռքբերումներն ու կրթական ռեֆորմները:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**

Կրթության գլոբալ մշտադիտարկման 2026թ-ի զեկույցը մատնանշում է գլոբալ, տարածաշրջանային և մեր երկրին առնչվող հիմնախնդիրները, որոնց հաղթահարման ուղղությամբ շարունակվելու են մեր երկրում կրթական համակարգում ռեֆորմների իրականացման շրջանակում:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

**30.03.2026**